336.3
Ф4-11

[1930]

1 1 SEP 2013

336.3

17 FEB 2010

# ԴԱՇՆԱԿԻՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏՆԵՐԻՆ

## ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՑՄԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ «ՀՆԳԱՄՅԱԿԸ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ» ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՎ.

*Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1930 թ. փետրվարի 21-ի վորոշմամբ, Ինդուստրացման 1-ին, 2-րդ փոխառությունները և Գյուղացիական Տնտեսության Ամրացման փոխառությունը պետք է միացվեն մի փոխառության մեջ, ԽՍՀՄ-ի ժողովրդական անտեսության զարգացման հնգամյա պլանի ֆինանսավորման համար, վորը բաց է թողնվում «Հնգամյակը չորս տարում» փոխառության անվան տակ:*

*Մեր մասսայական փոխառությունների միացումը կպարզեցնի պետական վարկի տեխնիկան և կհեշտացնի փոխառություններ պահողների համար ստանալ իրենց հասանելիք շահումները: Այսպիսի պարզեցումը հանդիսանում է խիստ անհրաժեշտ: Միության Ֆինժողկոմատում առ 1-ն մարտի 1930 թ. յեղած տվյալների համաձայն, պարտատոմսեր պահողների կողմից չեն պահանջված մոտ 45 միլլիոն ռուբլու գումարի շահումներ, տոկոսներ և մուծումներ: Սա վկայում է այն, վոր պար-*

12393.57

11 SEP 2013

տատոմսեր պահողների սպասարկումն անբավարար է դրված և որ աշխատավորները դժվարանում են ստուգելու իրենց պարտատոմսերը տիրաժների շահումների բազմաթիվ աղյուսակներով և դժվարանում են ստանալու տոկոսային յեկամուտը և մարումները, վորոնք վճարվում են զանազան ժամկետներում: Կոնվերսիան (միացումը) զգալիորեն կպարզեցնի և կոգնի «Հնգամյակի» փոխառության պարտատոմսեր ունեցողներին ժամանակին ստանալու իրենց հասանելիք օգուտները և մեր վարկային հիմնարկությունների հնարավորություն կտա կազմակերպելու պարտատոմսեր պահողներին ճիշտ և լրիվ սպասարկելը:

Մեր մասսայական փոխառությունները կազմում են մեր պետվարկի հիմնական միջուկը և խորհրդային պետության պետվարկը զանազանում են կապիտալիստական յերկրների պետվարկից: Նրանք բոլորն էլ բաց են թողնված միևնույն նպատակի համար— սոցիալիստական շինարարության ֆինանսավորման համար և տեղավորված են միևնույն պարտատոմս պահողների միջև— քաղաքի և գյուղի աշխատավորության մեջ: Աշխատավորները մասսայական փոխառությունների պարտատոմսերը գնում են ի հաշիվ այն խնայողությունների, վորոնք գոյանում են փոխառությունների համար ժամկետներով վճարվող վճարումների պրոցեսում:

Նրանք փոխառություններին բաժնեգրվում են նրա համար, վոր դրանով կենսագործվում է աշխատավորների ակտիվ մասնակցությունն իրենց անձնական միջոցներով սոցիալիստական շինարարության գործին: Ծահեկանության այն մոմենտները, վորոնք կապված են փոխառությունների հետ, հետին պլան են անցնում— առաջին պլանի վրա յեն անցնում սոցիալ-քաղաքական



կարգի մոմենտները: Աշխատավորները վատ են հետեվում շահումներին կուպոններով և մարումով յեկամուտ ստանալու ժամկետներին, մինչդեռ արտաքո կարգի կարեվոր է, վոր աշխատավորները ճիշտ ժամանակին ստանային իրենց հասանելիք յեկամուտները: Այդ պատճառով, նշանակալից գումարներ, վորոնք պատկանում են պարտատոմսեր պահողներին, վերջիններիս կողմից չեն պահանջվել: Այդ պատճառով, հնարավորության չափ անհրաժեշտ է պետվարկի տեխնիկան այնպես պարզեցնել, վոր պարտատոմսեր պահողների համար առավելագույն չափով պարզեցվի և հեշտացվի իրենց հասանելիք յեկամուտներին հետեվելը:

Դրությունը բոլորովին այլ է այն փոխառությունների նկատմամբ, վորոնք տեղավորված են անկազմակերպ բնակչության միջև: Այդ փոխառությունները նկատի յեն առնված ազատ միջոցների համար և գնվում են առավելապես վոչ աշխատավոր, ազատ դրամագլուխներ ունեցող անձանց կողմից այն օգուտների համար, վոր տալիս են փոխառությունները: Այս պայմանների բազմազանությունը հնարավորություն է տալիս փոխառությունների մեջ ներգրավել զանազան բնույթի միջոցներ, վորոնք պատկանում են այն անձանց, վորոնք փոխառություններին զանազան պահանջներ են ներկայացնում: Մի փոխառությամբ փոխարինել զանազան վոչ մասսայական փոխառությունները, վորոնք շուկայում շրջանառության մեջ են, աննպատակահարմար կլիներ: Անհարմար կլիներ նույնպես հասարակական կոնտրոլ սահմանել վոչ մասսայական փոխառությունների պարտատոմսերի վաճառման և գրավ դնելու վրա [illegible] այդ առաջ կբերեր այդ փոխառությունների [illegible] մատնանշված բը-

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Публичная Библиотека ՀԽՍՀ—ССРА им. А. Мясникяна
12392-57

նակչության խավերի կողմից, վորոնք փոխառությունները գնում են միմիայն նրանց տված շահի համար: Այդ պատճառով կոնվերսիան չի վերաբերել նրանց: Պետք է ընդգծել, վոր պլանային տնտեսությունը վոչ մասսայական փոխառությունների ոգնությամբ չկազմակերպված սեկտորից ստանում է այնպիսի միջոցներ, վորոնք չեն կարող ստացվել վոչ հարկերով և վոչ էլ ստացման հարկադրական այլ մեթոդներով: Ֆինմարմինները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն վոչ մասսայական փոխառությունների տեղավորման վրա և ֆոնդային աշխատանքի ակտիվացման վրա անկազմակերպ բնակչության մեջ, վորպեսզի այդ բնագավառում մոբիլիզացիայի յենթարկենք առավել հնարավոր միջոցներ ժողովրդական տնտեսության ֆինանսավորման համար:

«Հնգամյակը չորս տարում» փոխառությունը բաց է թողնվում այն պայմաններով, վորոնք ճշտությամբ կրկնում են ինդուստրացման 3-րդ փոխառության պայմանները:

Փոխառությունը բաժանվում է յերկու մասի՝ (ВЫПУСК) տոկոսաբեր շահող մասի պարտատոմսերի համար կուպոններով վճարվում է տարեկան 6 տոկոս և շահումներով 4 տոկոս, վոչ տոկոսաբեր շահող մասի պարտատոմսերով ամբողջ յեկամուտը (10 տոկոս) վճարվում է շահումների ձևով: Շահումների քանակը և գումարը, շահելու շանսը և ինդուստրացման 3-րդ փոխառության մյուս պայմանները պահպանվում են «Հնգամյակը չորս տարում» փոխառության մեջ:

Ի նկատի ունենալով այն, վոր «Հնգամյակ» փոխառությունը ճշտությամբ կրկնում է ինդուստրացման 3-րդ փոխառության պայմանները, անհրաժեշտություն



չկա շրջանառությունից հանել— արդեն բաց թողնված կամ թե պահողներին (держатели) ամրացված ինդուստրացման 3-րդ փոխառության պարտատոմսերը: Այդ պարտատոմսերը պետք է շարունակեն շրջանառության մեջ մնալ վորպես «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսեր և այսպիսով կկազմեն նոր փոխառության մի մասը:

«Հնգամյակը չորս տարում» փոխառությունը նախատեսվում է վոչ միայն միացվող փոխառությունների պարտատոմսերի փոխանակման համար, այլ և աշխատավորների մեջ տեղավորելու ընթացիկ և գալիք տարիներում, այսինքն՝ մինչև ժողովրդական տնտեսության ֆինանսավորման հնգամյա պլանը չորս տարում կատարելու ժամկետը: Ինչպես փոխանակման կամպանիան, նույնպես և «Հնգամյակի» փոխառության տեղավորումն սկսվում է ս. թ. ՀՈՒԼԻՍԻ 15-ից: Կամպանիայի պրոցեսում պետք է անցկացնել լայն բացատրական աշխատանք, ինչպես նոր փոխառության պայմանների, նույնպես և միացվող փոխառությունների պարտատոմսերի փոխանակման կարգի վերաբերյալ:

Փոխանակման տեխնիկան մանրամասնորեն ամփոփված է Միության Ֆինժողկոմատի հրահանգի մեջ, վորը միաժամանակ ուղարկվում է ներկա շրջաբերականի հետ:

Փոխանակումը պիտի անցկացվի առանց պահողների նախնական հարցումի, դրամարկղային ոպերացիայի կարգով, միացվող փոխառությունների դիմաց նոր փոխառության պարտատոմսեր տալու միջոցով: Ինդուստրացման 1-ին և 2-րդ փոխ. և Գյուղ. Տնտ. ամրացման փոխառության (ЗУКХ) պարտատոմսերը պահողներին իրավունք է տրվում իրենց պարտատոմսե-

րը փոխանակելու «Հնգամյակի» փոխառության այս կամ այն պարտատոմսերով ըստ ցանկության: Բանվորների և ծառայողների համար պետք է հնարավորություն ապահովվի իրենց պարտատոմսերը փոխանակել առանց անձամբ ներկայանալու վարկային հիմնարկություններ և առանց ժամանակի կորստի: Այդ պատճառով միացվող փոխառությունների պարտատոմսերի փոխանակությունը, վորոնք պատկանում են աշխատավորների կոլեկտիվների անդամներին, անցկացվում են գործակալական խնայողական դրամարկղների կողմից, կամ թե ուրիշ վարկային հիմնարկությունների վերադրյալ (приписная касса) դրամարկղների կողմից, վորոնք գտնվում են ձեռնարկություններին և հիմնարկություններին կից: Այն ձեռնարկություններում և հիմնարկներում, վորոնց կից վերադրյալ դրամարկղներ չկան, պետք է կազմակերպել համապատասխան դրամարկղների հատուկ այցելություններ: Փոխանակության համար այցելող դրամարկղների աշխատանքի սկսելու մասին կոլեկտիվի անդամներին պետք է հայտարարվի վաղորոք, վորպեսզի նրանք պատրաստվեն դրամարկղ հանձնելու իրենց պարտատոմսերը նոր փոխառության պարտատոմսեր ստանալու համար: Նմանապես և գյուղական վայրերում հնարավորության չափ պետք է կազմակերպվի խնայդրամարկղների կամ վարկային ընկերությունների շրջագայություն: Սրա հետ միասին, փոխանակության ոպերացիայի մասնակցության մեջ պիտի ներգրավել գյուղական վայրերում Փոստ Հեռագրական ժողկոմատի հիմնարկները և սպառկոոպերացիան:

Փոխանակության ժամանակ անպայման անհրաժեշտ է ստուգել միացվող փոխառությունների պարտատոմսերը, վորպեսզի վորոշվի թե արդյոք պարտա-



տոմս պահողն ստացել է իրեն հասանելիք շահումները, տոկոսները և մարումը:

Առ 1-ն մարտի 1930 թվի Միության Ֆինժողկոմատում յեղած տեղեկությունների համաձայն, պարտատոմս պահողների կողմից չի պահանջված 45 միլ. ռուբլի, այդ թվում 13 միլ. կուպոններով, 22 միլ. ռուբլու շահում և 10 միլ. ռուբլու մարում: Փոխառությունների պահողներին պատկանող այս գումարները կարող են նրանց կողմից ստացվել մինչև փոխանակումը: Այդ պատճառով փոխանակման ժամանակ պիտի անցկացվի պարտատոմսերն ստուգելու մեծ կամպանիա: Բոլոր պարտատոմս պահողներին պիտի տեղեկացվի, վոր կան իրենց կողմից չպահանջված խոշոր գումարներ, և վոր յեթե այդ գումարները չստացվեն նրանց կողմից մինչև կամ փոխանակության ժամանակ, վոր այն յերբեք չեն կարող պահանջվել և կհամարվեն կորսված իրենց տերերի համար: Աջակցող հանձնաժողովները պետք է մոբիլիզացիայի յենթարկեն ակտիվը և կազմակերպեն միացվող փոխառությունների կատարյալ ստուգում: Այն տեղեկատու սեղանները, վորոնք ստուգում են կատարում, պետք է կազմակերպվեն յուրաքանչյուր ցեխում, ձեռնարկության կամ հիմնարկության բաժիններում: Պարտատոմսերն ստուգելու կամպանիա անցկացնելն առանձնապես անհրաժեշտ է գյուղական վայրերում: Այն կազմակերպելու համար անհրաժեշտ է մոբիլիզացիայի յենթարկել գյուղական ամբողջ ակտիվը: Գյուղացիներին պիտի ծանուցվի ստուգման ժամանակի մասին ժողովներում:

Փոխառությունների փոխանակությունն այնպես է կազմակերպված, վոր այն վոչ մի կորուստ չի բերում միացվող փոխառություններ պահողների համար: Հաշ-

վարկման սկզբունքները, որոնք մանրամասն ամփոփված են Միության Ֆինժողկոմատի հրահանգի մեջ, կառուցված են այնպես, որ պետությունը պահողներին վճարում է բոլոր յեկամուտները, որ հասնում է փոխանակվող փոխառությունների պարտատոմսերով, յեթե փոխանակությունը կատարված է մինչև հունվարի 1-ը 1931 թ., նմանապես և այն բոլոր կուպոնները, որոնք առաջանում են ավելի յեկամտավոր փոխառությունների փոխանակությունից ավելի պակաս յեկամտաբերով:

Հաշվարկումները պարզեցնելու նպատակով միացվող փոխառությունների շահումների վճարահանությունները, որոնք պետք կատարվեյին մայիսից մինչև 1931 թ. հունվարը, պետք կատարվեն մինչ ժամկետանց մայիսի և հունիսի ընթացքում: Այսպիսով, միացվող փոխառության ամեն մի պահող պետք իմանա, թե պարտատոմսերից որ մեկն է շահել: Այդ պարտատոմսերը փոխանակության յենթակա չեն, որովհետև պետք մարվեն շահումներով: Մնացած պարտատոմսերը փոխանակության յենթակա յեն: Սակայն, մինչժամկետանց կատարված վճարահանություններով, որոնք կատարվում են մինչժամկետանց, շահումների վճարումը պետք է կատարվի ոչ թե յերեք որից հետո, աղյուսակի հրապարակումից հետո, ինչպես այդ կիրառվում է սովորական վճարահանությունների շահումների ժամանակ, այլ այն ժամկետներին, որ սահմանվել են համապատասխան տիրաժների կատարման համար:

Փոխանակության հետ միաժամանակ կանխիկ դրամով վճարվում է Ինդուստրացման 1-ին փոխառության կուպոնների արժեքը, որոնց ժամկետն է առ 1-ն հոկտեմբերի, 1930 թվի, Ինդուստրացման 2-րդ փոխառու-



թյան կուպոնների արժեքը, որոնց ժամկետն է 1930 թ. սեպտեմբերի 1-ը Գյուղ. Տնտ. ամրացման փոխառության կուպոնների արժեքը, որոնց ժամկետն է առ 1-ն փետրվարի 1931 թ.: Այս վճարումները կատարվում են փոխանակության հետ միաժամանակ, թեկուզ և մինչև կուպոնի վճարման ժամկետի հասնելը: Ինդուստրացման 1-ին փոխառության հոկտեմբերի 1-ից մինչև 1930 թ. դեկտեմբերի 1-ը ժամանակաշրջանի տոկոսները և Ինդուստրացման 2-րդ փոխառության սեպտեմբերի 1-ից մինչև 1930 թ. դեկտեմբերի 1-ը տոկոսաբեր շահող մասի տոկոսները հաշվարկումների տեխնիկան պարզեցնելու համար վճարվում են շահումների ձևով, որի համար և կազմակերպվում են հատուկ լրացուցիչ վճարահանություններ: Ինդուստրացման 1-ին փոխառությամբ վճարման յենթակա յե յերկու ամսվա տոկոս (1 տոկոս 200 միլ. ռուբլու) գումարով 2 միլ. ռուբլի: Այս գումարը պետք բաշխվի Ինդուստրացման 1-ին փոխառության պահողների միջև 100 ռուբլիանոց 20.000 շահում խաղարկելու միջոցով: Ինդուստրացման 2-րդ փոխառության տոկոսաբեր— շահող մասով վճարման յենթակա յե 3 ամսվա տոկոս (200 միլ. ռուբլու 1,5 տոկոս) գումարով 3 միլիոն ռուբլի: Այս գումարը պետք բաշխվի Ինդուստրացման 2-րդ փոխառ. տոկոսաբեր շահող մասի-- պարտատոմսեր պահողների միջև 100ռուբլիանոց 30000 շահում խաղարկելու միջոցով: Ոչ տոկոսաբեր շահող մասի պարտատոմսերը լրացուցիչ վճարահանություններին չեն մասնակցում, որովհետև մինչև 1930 թ. դեկտեմբերի 1-ը վճարման յենթակա բոլոր շահումները նրանց միջև խաղարկված են և հետևապես այդ պարտատոմսերը պահողների հետ ոչ մի լրացուցիչ հաշվարկում

չպիտի կատարվի: Լրացուցիչ վիճակահանություննե-
րով շահումները պիտի վճարվեն, սկսած 1930 թ. դե-
կտեմբերի 1-ից, այսինքն՝ այն ժամկետից, յերբ պիտի
վճարվեյին պահողներին հասանելիք տոկոսները, վո-
րոնց փոխարեն տրվում է շահում: Այն պարտատոմսե-
րը, վորոնք կշահեն լրացուցիչ վիճակահանություն-
ներում, մարվում են. այդ պարտատոմսերը ներկայա-
ցնողներին միաժամանակ շահումի հետ միասին վճար-
վում է շահած պարտատոմսերի անվանական արժեքը
(մարումը):

Այլ կերպ են կատարվում Գյուղ. Տնտ. Ամրաց-
ման փոխառության հաշվարկումները, վորի կուպոնի
ժամկետն է 1-ն փետրվարի 1931 թ.: Յեթե Գյուղ.
Տնտ. Ամրացման փոխ. համար, ինչպես և մյուս միաց-
վող փոխառությունների համար յեկամուտը վճարենք
միայն մինչև առ 1-ն դեկտեմբերի 1930 թ., այն դեպ-
քում կուպոնով, վորի վրա նշանակված է 60 կոպ., պի-
տի վճարվի 50 կոպ.: Գյուղացուն շատ դժվար կլիներ
բացատրել, թե ինչու կուպոնով նրան 10 կոպ. պակաս
ենք վճարում:

Այդ պատճառով պետությունը բացառություն
է սահմանել, վորի հիման վրա Գյուղ. Տնտ.
Ամրացման փոխառության պարտատոմսերի կուպոնը
լրիվ վճարում է: Շնորհիվ այս ձեռնարկումների, վո-
րոնք բաժանում են շահումների և տոկոսների հաշվար-
կումները, վոր ընթացիկ կուպոններով աճում են փո-
խանակության մոմենտից, միացվող փոխառություննե-
րի բոլոր պարտատոմսերը փոխանակության ժամանակ
ընդունվում են իրենց անվանական արժեքով:

«Հնգամյակը չորս տարում» փոխառությունը բաց
է թողնվում 1930 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-ից: Մինչև 1931



թ. հունվարի 1-ը նոր փոխառության պարտատոմսերը
տրվում են անվանական արժեքով:

Այն անձանց համար, վորոնք մինչև 1931 թ. հուն-
վարի 1-ը փոխանակում են, ապահովվում է յեկամտի
անընդհատությունը. նրանք ստանում են այն շահում-
ները, վորոնք յընթակա յեն խաղարկման մինչև 1931
թ. հունվարի 1-ը ժամանակաշրջանում:

Ինդուստրացման 1-ին փոխառության տոկոսներն
ընթացիկ կուպոններով վճարվում են մինչև հոկտեմբե-
րի 1-ը և մինչև սեպտեմբերի 1-ն՝ ինդուստրացման 2-րդ
փոխառության: Ինդուստրացման առաջին փոխառու-
թյան տոկոսները հոկտեմբերից մինչև դեկտեմբեր և
ինդուստրացման 2-րդ փոխառությանը՝ սեպտեմբերից
մինչև դեկտեմբեր վճարվում են շահումների ձևով լը-
րացուցիչ աերաժներով: 1930 թ. դեկտեմբերի 1-ից ըս-
կսվում է «Հնգամյակը չորս տարում» փոխառության
տոկոսների և շահումների հաշվումը:

Միացվող փոխառությունների պարտատոմսերի
տերերը կարող են իրենց պարտատոմսերը փոխանակել
«Հնգամյակ» փոխառությամբ 1931 թ. հունվարի 1-ից
հետո յոլ— յերեք տարվա ընթացքում, այսինքն՝ մին-
չև 1934 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ը: 1931 թվից հետո փոխա-
նակությունը կապված է կորուստների հետ, վորովհե-
տև 1931 թ. հունվարի մեկից մինչև փոխանակության
մոմենտը ժամանակաշրջանում պարտատոմսերի տերե-
րը վոչ մի յեկամուտ չեն ստանում. միացվող փոխա-
ռությունների պարտատոմսերով տոկոսները և շահում-
ները հաշվում են միայն մինչև 1930 թ. դեկտեմբերի
1-ը:

1930 թ. դեկտեմբերի մեկից մինչև 1931 թ. հունվա-
րի 1-ը փոխանակվող պարտատոմսեր պահողները յեկա-

մուտ են տանում «Հնդամյակի» փոխառության պարտատոմսերով: Այս ապահովվում է նրանով, վոր «Հնդամյակ» փոխառության պարտատոմսերը մինչև 1931 թ. հունվարի 1-ը առնվում են անվանական արժեքով, այսինքն՝ առանց պահելու պարտատոմսերի վրա աճող յեկամտի արժեքը: Հունվարի 1-ից հետո փոխանակության ժամանակ պահողներից գանձվում է այն յեկամուտների արժեքը, վոր աճել է «Հնդամյակ» փոխառությամբ 1931 թ. հունվարի մեկից մինչև փոխանակության օրը (պարտատոմսերի տոկոսը): Հաշվարկումների պարզեցման համար, այն գումարը, վորը գանձման յենթակա յե փոխանակության ժամանակ, յուրաքանչյուր ամսվա համար վորոշվում է:

1934 թվի հունվարի մեկից միացվող փոխառությունների պարտատոմսերը իրենց արժեքը բնավ կորցնում են, և նրանց տերերը կորցնում են նրանցով վորևե վճարումներ ստանալու իրավունքը:

Վերջին մոմենտը, վորի վրա անհրաժեշտ է դարձնել փոխառությունների պահողների ուշադրությունը, դա այն հաշվարկումներն են, վոր կապված են յեկամտաբերության տարբերության կոմպենսացիայի հետ, վոր գոյություն ունի Ինդուստրացման 1-ին և 2-րդ փոխառությունների միջև մի կողմից՝ և «Հնդամյակ» փոխառության՝ մյուս կողմից: Ինդուստրացման 1-ին փոխառության յեկամտաբերությունը հավասար է մինչև 15 % տարեկան, իսկ Ինդուստ. 2-րդ փոխառ., մինչև 11 տոկոս տարեկան: Այսպիսով, «Հնդամյակը չորս տարում» փոխ. պարտատոմսերով փոխանակելու ժամանակ Ինդուստրացման 1-ին փոխառության պահողները կորցնում են մոտավորապես այն 3 տոկոս տարեկան, վորը նրանք պիտի ստանային մինչև Ինդուստրացման 1-ին փոխառության մարումն ընկած ժամանակաշրջանում, այսինքն՝ 1931 թ. հունվարի 1-ից մինչև 1937 թ. հոկտեմբերի 1-ը: Ինդուստրացման 2-րդ փոխառության պահողները նույնպես տարեկան մի տոկոս են կորցնում 1931 թ. հունվարի 1-ից մինչև 1938 թ. սեպտեմբերի մեկն ընկած ժամանակամիջոցում: Պետությունն այս կորուստները վճարում է համապատասխան վճարումների միջոցով հատուկ վերադիր տալոններով: «Հնդամյակի» փոխառության պարտատոմսերի տալոնը, վորոնցով փոխանակվում է Ինդուստ. 1-ին փոխառությունը վճարվում է 1937 թ. հոկտեմբերի մեկից՝ «Հնդամյակի» փոխառության պարտատոմսերի տալոնը, վորոնցով փոխանակվում է Ինդուստրացման 2-րդ փոխառությունը, վճարվում է 1938 թ. սեպտեմբերի 1-ից: Այս տալոնները վճարվում են մինչժամկետանց այն դեպքում, յեթե պարտատոմսը շահում է, կամ յեթե այն մարման վիճակահանության դուրս գա: Այդ դեպքերում տալոնով վճարվում է վոչ թե տալոնի վրա նշանակված ամբողջ գումարը, այլ նրա այն մասը, վոր հատուցանում է յեկամտաբերության իջեցումը 1931 թ. հունվարի 1-ից մինչև պարտատոմսի շահումների կամ մարման վիճակահանությունների դուրս գալը ժամանակաշրջանում: Վճարման յենթակա գումարի մասին պիտի հաղորդվի «Հնդամյակի» փոխառության վիճակահանության աղյուսակներում:

Փոխանակության աշխատանքի պարզորոշ անցկացնելը շատ մեծ նշանակություն ունի պետական վարկի հետագա զարգացման համար: Արտաքո կարգի կարևոր է, վորպեսզի միացվող փոխառությունների պահողները ստույգ տեղյակ լինեյին այն մասին, վոր պետությունը վճարում է իրանց հասանելիք բոլոր յեկամուտները և

որ փոխանակությունը նրանց ոչ մի կորուստ չի տալիս: Նմանապես անհրաժեշտ է, որ փոխանակությունը ժամանակի կորստի հետ կապված չլինի, հերթերում կանգնելով և այլ անհարմարություններով փոխառությունների պահողների համար:

Փոխանակության օպերացիան, որի կազմակերպումը դրվում է ֆինանսական օրգանների վրա, հանդիսանում է բավականին բարդ և ոչ ճկուն օպերացիա, այդ պատճառով այն անցկացնելու ժամանակ անհրաժեշտ է մոբիլիզացիայի ենթարկել բոլոր ֆինանսական և վարկային հիմնարկությունների ուժերը և որ նրանց աշխատանքներն ունենան կատարյալ կազմակերպվածություն:

ԽՍՀՄ-ի Ֆինանսների Ժողովրդական Կոմիսար
ԲՐՅՈՒԽԱՆՈՎ

Պետվարկի Վարչության պետ՝ ՇՆԵՅԴԻՐ.



# ՀՐԱՀԱՆԳ

## ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ 1-ԻՆ ՅԵՎ 2-ՐԴ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՑՄԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ «ՀՆԳԱՄՅԱԿԸ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ» ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՎ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

1. «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերով փոխանակելու յենթակա յեն Ինդուստրացման 1-ին և 2-րդ փոխառության և Գյուղացիական Տնտեսության Ամրացման փոխառության պարտատոմսերը:

2. «Հնգամյակը չորս տարում» փոխառությունը բաց է թողնված նույն պայմաններով, ինչ և Ինդուստրացման 3-րդ փոխառությունը (հավասար չափի և քանակի շահումներ): Այդ պատճառով Ինդուստրացման 3-րդ փոխառության պարտատոմսերը «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերով փոխարինելու անհրաժեշտությունը վերանում է, և Ինդուստրամցան 3-րդ փոխառության պարտատոմսերը մնում են շրջանառության մեջ և համարվում են «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսեր:

# ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3. Վորպեսզի մանրամասնորեն տեղեկացվի պահողներին Ինդուստրացման 1-ին և 2-րդ փոխառությունների և Գյուղ. Տնտ. Ամրացման փոխառության պարտատոմսերի փոխանակության կարգի և պայմանների մասին, անհրաժեշտ պիտի լինի անցկացնելու մեծ բացատրական աշխատանք: Այդ պատճառով ուժերի տնտեսման համար փոխանակությունը հարկավոր է կատարել այն ժամանակաշրջանում, ինչ և «Հնգամյակը չորս տարում» փոխառության բաժնեգրվելու կամպանիան, այսինքն 1930 թ. հուլիսի յերկրորդ կեսից: Սակայն, փոխանակությունը չի կարող սկսվել Ինդուստրացման 1-ին փոխառության 12 և 13 տիրաժների, Ինդուստրացման 2-րդ փոխառության 8-րդ և 9-րդ տիրաժների, Գյուղացիական Տնտեսության Ամրացման փոխառության 6-րդ տիրաժի և Ինդուստրացման 1-ին փոխառության 1-ին և Ինդուստրացման 2-րդ փոխառության տոկոսաբեր շահող մասի լրացուցիչ տիրաժների շահումների պաշտոնական աղյուսակի ստացումից առաջ: Նմանապես չի կարող սկսվել, մինչև վոր չանցկացվի փոխանակվող փոխառությունների պարտատոմսերի ստուգումն շահումների բոլոր տիրաժներով (ստուգումն անցկացնելու կարգը մանրամասն մատնանշված է այս հրահանգի 15 կետում):

Անհրաժեշտ է ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի փոխանակությունը բանվորների, ծառայողների և կազմակերպված տնայնագործների մեջ ավարտվեր 1930 թ. հոկտեմբեր 1-ի շրջանում («Հնգամյակը չորս տարում» փոխառության իրացման ժամանակաշրջանի վերջացման ժամկետին):



Ինչ վերաբերում է գյուղացիության և քաղաքի անկազմակերպ բնակչության, համենայն դեպս այստեղ փոխանակությունը պետք է ավարտված լինի վոչ ուշ քան 1931 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ին, վորովհետև մինչ այս ժամկետն է յեկամուտ հաշվվում փոխանակվող փոխառությունների պարտատոմսերի վրա:

Այն պարտատոմս պահողները, վորոնք չեն հասցրել փոխանակելու պարտատոմսերը մինչև 1931 թ. հունվարի 1-ը, նրանց համար արտոնյալ ժամկետ է սահմանված մինչև 1934 թվի հունվարի 1-ը փոխանակելու համար, վորից հետո Ինդուստրացման 1-ին և 2-րդ փոխառությունների և Գյուղ. Տնտ. Ամրացման փոխառության պարտատոմսերը վոչնչացվում են:

# ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Փոխանակության օպերացիան անցկացնելու ամբողջ կազմակերպչական օպերատիվ և բացատրական աշխատանքի ընդհանուր ղեկավարությունը դրված է ֆինանսական մարմինների վրա:

Քաղաքներում և քաղաքատիպ ավաններում փոխանակության օպերացիան անցկացվում է Միության ԽՍՀ վարկային սիստեմի միջոցով (պետական բանկի հիմնարկությունների, պետական աշխատավորական խնայողական դրամարկղների և այլ վարկային հիմնարկների):

Վարկային հիմնարկները կատարում են Ինդուստրացման 1-ին և 2-րդ փոխառությունների և Գյուղացիական Տնտեսության Ամրացման փոխառության պարտատոմսերի փոխանակությունը «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերով, ներկա հրա-

Гос. Публ. Библиотека ՀՍԽՀ — ССРА им. А. Мясникяна
12393.52

հանգով սահմանված կարգով և պայմաններով (ֆինանսական օրգանների և վարկային հիմնարկությունների միջև հատուկ պայմանագրերի կնքում չի պահանջվում):

Այս բոլոր հաշվարկային դրամարկղային ֆունկցիաները, վորոնք կապված են փոխանակության օպերացիան անցկացնելու հետ, ամբողջությամբ դրվում են պետական բանկի և նրա տեղական հիմնարկությունների վրա: Պետբանկի հիմնարկությունները պարտավոր են վարկային հիմնարկությունների հետ կատարել փոխանակության անցկացման բոլոր հաշվարկումները և նրանց պարտատոմսեր հայթայթել:

Վարկային հիմնարկությունները Պետբանկի տեղական հիմնարկություններին ներկայացնում են փոխանակության օպերացիայի համար սահմանված հաշվետվություն:

Փոխանակության օպերացիայի բոլոր հաշվարկումները ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի հետ և նրան հաշվետվության ներկայացնելը կատարում է Պետական Բանկի Վարչությունը: Պետբանկի գավառային հիմնարկությունները Պետբանկի վարչության փոխանակության օպերացիայի մասին հաշվետու տեղեկություններ ներկայացնելու հետ միաժամանակ այդ տեղեկությունների պատճենները տալիս են տեղական ֆինմարմիններին և Պետբանկի երկրային կամ նահանգական գրասենյակներին, նմանապես ֆինմարմիններին հաղորդում են տեղեկություններ նրանց պահանջմամբ փոխատվության ընթացքի մասին և ուրիշ տեղեկություններ:

Վարկային հիմնարկությունների կողմից անցկացվող փոխանակության օպերացիայի աշխատանքներին հե-



տևելը և հսկողությունը կենսագործում են Ֆինժողկոմատի մարմինները:

Վարկային հիմնարկությունների փոխանակության օպերացիայի կատարման համար սահմանված պատասխանատվությունը վորոշվում է ներկա հրահանգով:

5. Գյուղական վայրերում փոխանակության օպերացիայի ընդհանուր ղեկավարությունը դրվում է շրջգործկոմների և նրանց կից գործող պետվարկին և խնայողական գործին աջակցող հանձնաժողովի վրա:

Փոխանակության օպերացիան անցկացվում է այն վարկային հիմնարկությունների միջոցով, վորոնք գտնվում են գյուղական վայրերում (նույն թվում խնայդրամարկղները, գյուղատնտեսական վարկային ընկերությունները կամ թե շրջգյուղբանկերը): Մատնանշված վարկային ընկերությունները փոխանակության օպերացիան անցկացնում են այն կարգով և պայմաններով, վորոնք սահմանված են ներկա հրահանգով (շրջգործկոմների և վարկային ընկերությունների միջև հատուկ պայմանագրի կնքում չի պահանջվում):

Գյուղական վայրերում ընկած փոխանակության օպերացիայի անցկացման բոլոր հաշվարկումները վարկային ընկերությունները կատարում են շրջգործկոմների (ՐԻԿ-ի) հաշվարկային կենտրոնի հետ (այն վարկային հիմնարկության հետ, վորի վրա դրված է շրջանային բյուջեն կատարելու աշխատանքը): Իր հերթին շրջգործկոմի հաշվարկային կենտրոնը տանում է փոխանակության օպերացիայի վերաբերյալ իր և այն վարկային ընկերությունների հաշվարկումները, վորոնք գտնվում են շրջանի տերիտորիայում, պետբանկի գա-

վճարային բաժանմունքի հետ: Պետբանկի այն բոլոր հիմնարկությունները, որոնք գտնվում են գավառի տերիտորիայում, կատարում են հաշվարկումներ և փոխանակության միջարերյալ հաշվետվություն են ներկայացնում Պետբանկի գավառային հիմնարկության:

6. Վարկային ընկերությունները «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերը, փոխանակվող փոխառությունների պարտատոմսերը, նմանապես և մասնանշած փոխառությունների պարտատոմսերի կտրոնները և վերադիր տալոնները կորչելու, ոչնչացվելու, փչացվելու կամ թե հափշտակվելու դեպքում կրում են լիակատար նյութական պատասխանատվություն: ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի վնասները, որ տեղի յին ունեցել կորսվելու, ոչնչացվելու, փչացվելու, կամ թե մասնանշած արժեքների հափշտակման պատճառով, հատուցում է վարկային ընկերությունը նրանց արժեքի չափով:

7. Փոխանակությունն անցկացնելու համար Պետբանկի հիմնարկությունները մասհանում են ստանում 0,35 %-ի չափով փոխանակված պարտատոմսերի անվանական արժեքից: Պետբանկի վարչությունն այս մասհանումից իր հետ հաշվարկումներ կատարող վարկային ընկերություններին վճարում է ամիսը մի անգամ այն պարտատոմսերի անվանական արժեքի 0,25 %, որոնք փոխանակվել են տվյալ վարկային ընկերության կողմից, իսկ Պետաշխխնայդրամարկղներին 0,35 %:

8. Կազմակերպված աշխատավորության մեջ փոխանակությունն անհրաժեշտ է կատարել անմիջականորեն ձեռնարկություններում և հիմնարկություններում:

Որպես կանոն փոխանակությունը կենսագործում է այն վարկային հիմնարկությունը, որին ավելի սերտ է



կապված տվյալ հիմնարկության կամ ձեռնարկության հետ նախորդ փոխառությունների պարտատոմսերի բաժնեգրությունն անցկացնելու կամ պահ ընդունելու միջարերյալ:

Այս դեպքում առաջին հերթին փոխանակության համար ներգրավվում են տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության կից գործակալական խնայդրամարկղները: Այն ձեռնարկություններում և հիմնարկություններում, որտեղ գործակալական խնայդրամարկղներ չկան, կամ թե որտեղ դրամարկղները որևէ պատճառով չեն կարող փոխանակություն կատարել, անհրաժեշտ է կազմակերպել վարկային ընկերությունների աշխատակիցների շրջագայություն փոխանակության կատարման համար:

Ֆինմարմինները բոլոր կոլեկտիվներին բաշխում են վարկային ընկերությունների միջև Պետբանկի հիմնարկությունների և խնայդրամարկղների համաձայնությամբ: Վարկային հիմնարկությունները ճշտորեն պիտի ուրվագծեն ամեն մի հիմնարկություն և ձեռնարկություն գնալու օրացուցային ծրագիրը, լայն կերպով տեղեկացնելով աջակցող հանձնաժողովների միջոցով կոլեկտիվի բոլոր անդամներին շրջագայող դրամարկղների դուրս գալու ժամկետի մասին:

9. Բացառիկ դեպքերում, երբ ձեռնարկություն կամ հիմնարկություն գնալը չի կարող կատարվել, փոխանակությունը պետք է կազմակերպել ֆոնդային միջնորդների միջոցով այնտեղ, որտեղ նրանք կան, կամ թե խնայդրամարկղների միջնորդների միջոցով:

10. Շրջգործկոմներին անհրաժեշտ է ձեռք առնել այն բոլոր միջոցները, որպեսզի փոխանակությունը հնարավորության չափ մատչելի գյուղական բնակչու-

թյան: Հաշվի առնելով, վոր վարկային հիմնարկությունները գյուղական վայրերում չնչին են, վորի պատճառով և նրանց կհաջողվի սպասարկել վոչ մեծ թվով բնակված կետեր, անհրաժեշտ ե հնարավորության չափ լայն կերպով կազմակերպել վարկային հիմնարկությունների աշխատակիցների շրջագայությունը դեպի այն գյուղերը, վորտեղ վարկային հիմնարկություններ չկան. դուրս գալու նպատակի և ժամկետի մասին լայն կերպով պետք ե տեղեկացվի բնակչության: Առանձնապես ցանկալի յե կազմակերպել կոլխոզներ գնալը փոխանակության կատարման համար:

11. Շրջագայող դրամարկղներ կազմակերպելու հետ միասին, շրջգործկոմները պետք ե փոխանակությունը կազմակերպեն սպառկոոպերացիայի միջոցով:

Սպառկոոպերացիան կատարում ե բացառապես առձեռն պարտատոմսերի փոխանակություն և չի կատարում պահ տալու—փոխառական վկայականների փոխանակություն, նմանապես շահումներ ևս չի վճարում:

Սպառկոոպերացիայի այս ոպերացիայի ձևը կատարվում ե ներկա հրահանգի հիման վրա և ԽՍՀՄ ՖԺԿ-ի հետ համաձայնեցրած ԽՍՀՄ-ի Ցենտրոսոյուզի համապատասխան դիրեկտիվների հիման վրա:

Սպառընկերությունների վարչությունը բոլոր խանութների գանձապահների վրա պարտականություն ե դնում փոխանակական ոպերացիաներ կատարել (այն խանութներում, վորտեղ հատուկ գանձապահներ չկան, փոխանակությունը կատարվում ե խանութների վարիչների միջոցով):

Փոխանակության համար անհրաժեշտ «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերը սպառընկերությունների վարչությունը ստանում ե այն շրջգործկոմից, վորի տերիտորիայում գտնվում ե վարչությունը: Այս շրջգործկոմի հետ ել սպառընկերությունների վարչությունը կատարում ե փոխանակական ոպերացիայի վերաբերյալ բոլոր հաշվարկումները:

Շրջգործկոմն իր հաշվարկու կենտրոնի միջոցով սպառընկերությունների վարչության կանխավճարով տալիս ե «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերն այն քանակով, վորը սահմանվում ե համաձայնությամբ: Այդ կանխավճարը չպետք ե գերազանցի յերկու շաբաթվա ընթացքում փոխանակության համար անհրաժեշտ գումարից:

Սպառընկերությունների վարչությունը շրջգործկոմի հետ հաշիվը մաքրում ե ստացած պարտատոմսերի համար շրջգործկոմի հաշվարկման կենտրոնին փոխանակված փոխառությունների պարտատոմսերը և «Հնգամյակը չորս տարում» փոխառության չոգտագործված մնացորդը հանձնելու միջոցով, վորոնց ընդհանուր գումարը պետք ե հավասար լինի փոխանակության համար ստացված «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերի անվանական արժեքին: Փոխանակված փոխառությունների պարտատոմսերի հետ միաժամանակ պետք ե հանձնվեն վերադիր տալոնները: Տալոնների հանձնման կարգը մանրամասնված ե ներկա հրահանգի 40-րդ կետում:

Սպառընկերությունը փոխանակության հետ միաժամանակ իր դրամարկղի առձեռն գումարից փոխանակվող պարտատոմսեր պահողներին վճարում ե տոկոսներ ընթացիկ կուպոններով, թեկուզ և մինչև ժամկետը լրանալը (տես կետ 27): Սպառընկերությունն այդ կուպոնները հանձնում ե շրջգործկոմի հաշվարկման կենտ-

րոնին, վորից սպառընկերությունը կուպոնները հանձնելու ժամանակ ստանում է կուպոնների համար վըճարված գումարների հատուցումը:

Սպառընկերությունը լիովին պատասխանատու յե իր մոտ մուտք յեղող պարտատոմսերի տալոնների և կուպոնների ամբողջության համար:

Սպառընկերությունն ամեն ամիս մասհանում է ստանում պարտատոմսերի գումարի 0,25 տոկոսի չափով: Շրջգործկոմները պարտավոր են միջոցներ ձեռք առնել լայն կերպով տեղեկացնելու բնակչությանը սպառկոոպերացիայի կողմից փոխառության անցկացնելուն մասնակցելու մասին:

12. Բացի սպառկոոպերացիայից, փոխառության ոպերացիան անցկացնելուն մասնակցում են փոստ-հեռագրատան այն հիմնարկությունները, վորոնք ընկած են գյուղական վայրերում, վորոնց կից չկան վերադրյալ խնայողական դրամարկղներ (փ. հ. այն հիմնարկությունները, վորոնց կից կան խնայողական դրամարկղներ, մասնակցում են փոխառության ոպերացիային խնայդրամարկղների գըծով):

Գավառական ֆինանսական բաժանմունքները, կապի գավառային գրասենյակի համաձայնությամբ վորոշում են ՓՀԺ այն հիմնարկությունների ցուցակը, վորոնք մասնակցում են յուրաքանչյուր շրջանի տերրիտորիայում և այդ ցուցակը հաղորդում են շրջգործկոմին: Շրջգործկոմը պետք է տեղեկացնի բնակչության փոստային հիմնարկությունների փոխառության ոպերացիան անցկացնելուն մասնակցելու մասին և ընդհանուր հսկողություն ունենա նրանց աշխատանքի վրա:



Փոխառության համար ներգրավվում են հասարակային և վոչ հասարակային գործակալությունները, շարժական փոստերի գործակալները և վորտեղ հնարավոր է, նամակատարները:

Փոխառության համար անհրաժեշտ «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերը Պետբանկի գավառային բաժանմունքները հանձնում են կապի գավառային գրասենյակներին, վորոնք իրենց հերթին պարտատոմսեր հայթայթում են իրենց բոլոր այն ստորադաս հիմնարկություններին, վորոնք փոխառությանը մասնակցում են: Պետբանկի այս բաժանմունքների հետ էլ կապի գավառային գրասենյակները կատարում են փոխառության ոպերացիայի վերաբերյալ բոլոր հաշվարկումներն իրենց ստորադաս բոլոր հիմնարկությունների համար այն կարգով, վորը նախատեսված է ներկա հրահանգի 40-րդ հոդվածով:

Փոստ-հեռագրական ժողկոմատի հիմնարկությունները փոխառությունը կատարում են այն պայմաններով, վոր ամփոփված է ներկա հրահանգի մեջ, նմանապես և ԽՍՀՄ ՖԺԿ-ի հետ համաձայնեցված ՓՀԺ շրջաբերականի հիման վրա: Այդ դեպքում ՓՀԺԿ-ի հիմնարկությունները բացառապես կատարում են առձեռն պարտատոմսերի փոխանակության և չեն կատարում պահ տալու փոխառվական վկայականների փոխանակություն: ՓՀԺԿ-ի հիմնարկությունները փոխանակության հետ միաժամանակ կատարում են փոխանակվող փոխառությունների պարտատոմսերի ընթացիկ կուպոնների վճարում: Կուպոնների վերաբերյալ հաշվարկումները կատարվում են ՓՀԺԿ-ի հիմնարկությունների համար սահմանված ընդհ. կարգով:

Հիմնարկությունները չահումների վճարումը կատարում են Փոստ-հեռագրական ժողկոմատի, ԽՍՀՄ ՑԺԿ-ի և Գեռմանկի հետ կայացված համաձայնության համապատասխան:

Փոստհեռագրական ժողկոմատը լիակատար նյութական պատասխանատվություն է վերցնում իր կողմից ստացված արժեքների ամբողջության և պահպանության համար:

Փոստհեռագրական մարմինները փոխանակված պարտատոմսերի գումարից մասնահանում են տասնում 0,75 տոկոսի չափով: Մասհանման վճարումը կատարվում է ամսական մեկ անգամ: Գեռմանկի գավառային հիմնարկությունները կապի գավառային դրասենյակին մասնահանում են վճարում «ԽՍՀՄ ՑԺԿ-ի փոխառությունների իրացման վերաբերյալ» հաշվով:

13. Բացի ՓՀԺ-ի մարմիններից և պատկոոպերացիայից փոխանակությանը պետք է մասնակցեն խնայդրամարկղների միջնորդները, որոնք ներգրավվում են այն խնայդրամարկղների կողմից, որոնց նրանք ենթարկվում են: Այս խնայդրամարկղները լիովին պատասխանատու յեն այն արժեքների համար, որ հանձնվել են միջնորդներին:

Միջնորդները կատարում են միայն առձեռն պարտատոմսերի փոխանակություն և ընթացիկ կտրոնների վճարում: Փոխանակության օպերացիայի վերաբերյալ բոլոր հաշվարկումները, միջնորդները կատարում են այն խնայդրամարկղի հետ, որոնց նրանք ենթարկված են: Փոխանակության օպերացիան անցկացնելու համար խնայդրամարկղների միջնորդները փո-



խանակված պարտատոմսերի գումարից մասհանում են տասնում 0,35 տոկոսի չափով:

Շրջգործկոմներին անհրաժեշտ է հսկողություն ունենալ, որպեսզի խնայդրամարկղների միջնորդների ցանցը հնարավորության չափ լայն օգտագործվեր:

Այն պարտատոմսեր պահողները, որոնք չեն հասցրել փոխանակելու իրենց պարտատոմսերը շրջադայող դրամարկղի աշխատանքի ժամանակ տվյալ ձեռնարկությունում (հիմնարկությունում), փոխանակությունը կատարում են իրենց պարտատոմսերն անմիջականորեն վարկային հիմնարկության ներկայացնելու միջոցով:

Նույն ձևով վարկային հիմնարկություններին անմիջականորեն իրենց պարտատոմսերը ներկայացնելու կարգով, պարտատոմսերը փոխանակում են՝

ա) այն կոլեկտիվի անդամները և այն գյուղերի բնակիչները, որոնց մոտ շրջադայող դրամարկղը չի գնացել և որտեղ չէր կարելի կազմակերպել փոխանակությունը խնայդրամարկղների միջնորդների, ՓՀԺԿ մարմինների և պատկոոպերացիայի միջոցով և

բ) քաղաքի չկազմակերպված բնակչությունը:

## ՓՈԽԱՆԱԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՏԻՐԱԺՆԵՐՈՎ ՍՏՈՒԳԵԼՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

15. Փոխանակությանն անպատճառ պետք է նախորդի փոխանակվող փոխառությունների պարտատոմսերի ստուգումը շահումների բոլոր տիրաժներով:

Պարտատոմսերի ստուգումը կատարում են աջակ-

ցող հանձնաժողովները մոտավորապես փոխանակության սկսելուց յերկու շաբաթ առաջ տվյալ ձեռնարկությունում կամ հիմնարկությունում:

Հանձնաժողովը պարտավոր է ձեռք առնել այն բոլոր միջոցները, վորպեսզի լայն կերպով տեղեկացնի կոլեկտիվի բոլոր անդամներին պարտատոմսերն ստուգելու անհրաժեշտության մասին, նախազգուշացնելով նրանց այն մասին, վոր փոխանակությունից հետո շահումների վճարման վերաբերյալ վոչ մի հայտարարություն չպիտի ընդունվի: Աջակցող հանձնաժողովներն իրենց անդամներից հերթապահություններ են սահմանում ստուգումն անցկացնելու համար, կազմակերպելով այդ աշխատանքը հնարավորության չափ բոլոր ցեխերում (բաժանմունքներում):

Գյուղական վայրերում պարտատոմսերի ստուգման համար ներգրավվում են գյուղխորհուրդներին կից աջակցող հանձնաժողովների անդամները և ամբողջ գյուղական ակտիվը:

Կոլտնտեսություններում ստուգումը պիտի անցկացվի կոլտնտեսություններին կից կազմակերպված աջակցող հանձնաժողովների միջոցով:

Աջակցող հանձնաժողովների կողմից կատարվող շահումների ստուգումը չի ազատում հիմնարկությունների աշխատակիցներին, վորոնք կատարում են փոխանակություն, պարտատոմս պահողների առաջին պահանջմամբ փոխանակության համար ներկայացվող պարտատոմսերը ստուգելու պարտականությունից:

Ֆինմարմինները պետք է ժամանակին բոլոր աջակցող հանձնաժողովներին հայթայթեն աղյուսակներ անհրաժեշտ քանակով:



## ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ.

16. Փոխանակությունը կատարվում է գրամարկղային կարգով. ներկայացվող ինդուստրացման 1-ին և 2-րդ փոխառությունների և Գյուղ. Տնտ. Ամրացման փոխառության պարտատոմսերի դիմաց տրվում են «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսեր: Նախնական վոչ մի հայտարարություն չի կատարվում:

Փոխանակության համար անհրաժեշտ պարտատոմսերը կանխավճարով պիտի ուղարկվեն տեղերին Պետբանկի գավառային բաժանմունքների հասցեյով, վորոնց պարտականությունն է հայթայթել գավառային քաղաքներում գտնվող վարկային ընկերություններին և Կապի գավառային գրասենյակներին պարտատոմսեր, ինչպես նաև շրջգործկոմի հաշվարկման կենտրոններին: Վերջիններս իրենց հերթին պարտատոմսեր են հայթայթում այն հիմնարկություններին, վորոնք փոխանակություն են կատարում շրջանի տերիտորիայում, ի բաց առյալ ՓՀԺ-ի հիմնարկություններից:

17. Այն բոլոր հիմնարկությունները, վորոնք անմիջականորեն կենսագործում են փոխանակությունը, պետք է հայթայթվեն պարտատոմսերի բավարար քանակով այն հաշվով, վորպեսզի անարգել բավարարեն պարտատոմս պահողների պահանջները «Հնգամյակը չորս տարում» փոխառության, ինչպես վոչ տոկոսաբեր—շահող, նույնպես և անտոկոս շահող յերկու մասերն էլ, պարտատոմսերի այն արժողությամբ, վոր կցանկանան ստանալ պարտատոմս պահողը.

2 ռ. 50 կոպեկանոց պարտատոմսերը փոխանակության համար օգտագործվում են միայն Գյուղացիական Տրն—

տեսության ամրացման փոխառության վոչ զույգ պարտատոմսերի քանակ ներկայացնելու դեպքում՝ 2ռ. 50 կ. արժողությամբ: Այսպես, յեթե փոխանակության համար ներկայացված է գյուղացիական տնտեսության ամրացման փոխառության պարտատոմսեր 7 ռ. 50 կ. գումարի, այդ դեպքում փոխարենը տրվում է նոր փոխառության մեկ պարտատոմս 5 ռուբլիանոց և մեկ տոմս 2 ռ. 50 կոպեկանոց:

18. Բացի կանխիկ պարտատոմսերից, դրամարկղային կարգով շրջագայելու ժամանակ կենսագործվում է նաև պահ տալու փոխատվական (ссудо-сохранные) վկայականների փոխանակությունը, յեթե այդ վկայականները տրված են այն վարկային հիմնարկության կողմից, վորը կատարում է փոխանակությունը տվյալ ձեռնարկությունում կամ գյուղում, և յեթե այդ վկայականներով կարիք չկա կատարելու շահումների վճարում կամ թե ժամկետանց կտրոնների վճարում: Պահ տալու փոխատվական վկայականն այդ դեպքում առնվում է և նրա փոխարեն պարտատոմս պահողին տրվում են «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերի համապատասխան գումար և ընթացիկ կտրոնով հասանելիք տոկոսները: Յեթե ներկայացված պահ տալու փոխատվական վկայականով անհրաժեշտ է շահում վճարել կամ թե վճարել ժամկետանց կտրոններ, այն դեպքում փոխանակությունը կատարվում է միայն վկայականը վարկային ընկերության ներկայացնելու կարգով, վորը տվել է վկայականը, անձնական քարտի հետ ստուգելուց հետո:

Ծանոթ.—Ընթացիկ կտրոնի վճարման անհրաժեշտությունը պահ տալու փոխատվական վկ-



կայականի փոխանակությունը չի արգելում դրամարկղային կարգով:

19. Յեթե պարտատոմս պահողը ցանկություն հայտնի «Հնգամյակը չորս տարում» փոխառությամբ փոխանակած իր պարտատոմսերը թողնել ի պահ, այն դեպքում շրջագայող դրամարկղի աշխատակիցը նրա ազգանունը, հասցեն և պահ տրվող պարտատոմսերի ընդհանուր գումարը գրանցում է հատուկ ցուցակի մեջ պարտատոմսերը մասերի բաժանելով (տոկոսաբեր և անտոկոս): Պահ տալու—փոխատվական վկայականը վերցվում է հատուկ ստացականով: Այդ վկայականի մեջ էլ, իսկ վոչ հնարավոր դեպքում, նորի մեջ գրանցվում են «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերի համարները, վորից հետո վկայականը տրվում է պարտատոմս պահողին կամ անհատական կարգով, հիմնարկության կամ ձեռնարկության վարչության միջոցով, կամ թե ուղարկվում է պարտատոմս պահողի մատնանշած հասցեյով:

20. Վկայականն անմիջականորեն վարկային հիմնարկությանը ներկայացնելու կարգով, վոր տվել է պահ տալու փոխատվական վկայականը, փոխանակությունը կատարվում է այն դեպքում, յերբ վկայականը ծանրաբեռնված է փոխատվությամբ, կամ թե յերբ վկայականը տրված է վոչ թե այն վարկային հիմնարկության կողմից, վորը փոխանակությունը կատարում է տվյալ ձեռնարկություններում (հիմնարկություններում) կամ գյուղում:

21. Փոխանակվող փոխառությունների պարտատոմսերը, վորոնք հանձնված են վարկային ընկերություններին ի պահ և չեն ծանրաբեռնված փոխատվու-

թյուններով, այն դեպքում, յեթե պահ տալու փոխատվական վկայականի տերը մինչև 1930 թ. դեկտ. մեկը չներկայացնի փոխանակելու վկայականը, իրենք վարկային ընկերություններն են փոխանակում 1930 թ. դեկտեմբերի ընթացքում: Այս դեպքում Ինդուստրացման 1-ին փոխառության, Գյուղացիական Տնտեսության Ամրացման փոխառության պարտատոմսերը և Ինդուստրացման 2-րդ փոխառության տոկոսաբեր—շահող մասը փոխանակվում են «Հնգամյակը չորս տարում» փոխառության տոկոսաբեր—շահող մասի պարտատոմսերով: Ինդուստրացման 2-րդ փոխառության ոչ տոկոսաբեր շահող մասի պարտատոմսերն ընդունվում են փոխանակության համար անվանական արժեքով:

22. Յեթե փոխանակվող պարտատոմսերի տերը փոխել է բնակավայրը, իսկ նրա պարտատոմսերը մնացել են ի պահ վարկային ընկերության մեջ ըստ հին բնակավայրի, այն դեպքում պարտատոմսերի տերը հանձնարարում է այն վարկային ընկերության, վորտեղ պահվում են նրա պարտատոմսերը, փոխանակելու այն «Հնգամյակը չորս տարում» փոխառությամբ, վորից հետո կամ թողնել ի պահ, կամ թե ուղարկել իրեն նոր փոխառության պարտատոմսերը (առաքումը կատարվում է պարտատոմսերի տիրոջ հաշվին):

Հանձնարարությունն անելու հետ միասին պարտատոմսեր պահողն ուղարկում է իր պահ տալու փոխատվական վկայականն այն վարկային ընկերության, վորտեղ պահվում են պարտատոմսերը:

## ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

23. Ինդուստրացման 1-ին փոխառության, Գյու-



ղացիական Տնտեսության Ամրացման և Ինդուստրացման 2-րդ փոխառության (տոկոսաբեր—շահող և ոչ տոկոսաբեր շահող մասերը) պարտատոմսերն ընդունվում են փոխանակության համար անվանական արժեքով:

24. Համաձայն փոխանակության համար սահմանված կանոնների, Ինդուստրացման 1-ին և 2-րդ փոխառությունների յեկամուտները պիտի վճարվեն պարտատոմսերի տերերին մինչև 1931 թ. հունվարի 1-ը, իսկ Գյուղացիական Տնտեսության Ամրացման փոխառությանը՝ մինչև 1931 թ. փետրվարի 1-ը: Ի կատարումն սրա, փոխանակվող փոխառությունների պարտատոմսերի համար սահմանվում են խաղարկության, շահումների և տոկոսների վճարման հետևյալ կանոնները:

## ՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

25. Վորպեսզի ապահովել հնարավորություն Ինդուստրացման 1-ին և 2-րդ փոխառության պարտատոմսեր պահողների համար մասնակցելու շահումների բոլոր տիրաժներին, վորոնք ընկնում են 1930 թ. հուլիսի 15-ից մինչև 1931 թ. հունվարի 1-ը ժամանակաշրջանում, մատնանշած տիրաժները կատարվում են նախքան փոխանակությունն սկսելը: Այս դեպքում այն շահումները, վորոնք ընկել են փոխադրված տիրաժներին, պետք է վճարվեն այն ժամկետներին, վորոնց ընթացքում յենթակա եյին վճարման, յեթե տիրաժները չը փոխադրվեյին:

Ինդուստրացման փոխառությունների տիրաժները կատարվում են հետևյալ ժամկետներին՝

ա) Ինդուստրացման 1-ին փոխառության 12-րդ տիրաժը 2—3 հունիսի 1930 թ., այս տիրաժի շահումները վճարվում են սկսած 1930 թ. օգոստոսի 20-ից։

բ) Ինդուստրացման 1-ին փոխառության 13-րդ տիրաժը—1930 թ. հունիսի 4-ից 5-ը շահումները վճարվում են, սկսած 1930 թ. նոյեմբերի 20ից։

գ) Ինդուստրացման 2-րդ փոխառության 7-րդ տիրաժը—1930 թ. հունիսի 6—8-ը, շահումները վճարվում են սկսած 1930 թ. հունիսի 20-ից։

Ինդուստրացման 2-րդ փոխառության 8-րդ տիրաժը—1930 թ. հունիսի 9-ից 11, շահումները վճարվում սկսած 1930 թ. սեպտեմբերի 20-ից։

Ինդուստրացման 2-րդ փոխառության 9-րդ տիրաժը—1930 թ. հունիսի 12—14, շահումները վճարվում են սկսած 1930 թ. դեկտեմբերի 20-ից։

Գյուղացիական Տնտեսության Ամրացման փոխառության 6-րդ տիրաժը կատարվում է 1930 թ. մայիսի 20-ից —27-ը, շահումները վճարվում են, սկսած 1930 թ. հոկտեմբերի 1-ից։

26. Այն պարտատոմսերը, վորոնք շահել են, փոխանակության յենթակա չեն։ Այդ պարտատոմսերով շահումի հետ միաժամանակ կանխիկ դրամով վճարվում է շահած պարտատոմսերի անվանական արժեքը (մարման գումարը)։

Յեթե այն պարտատոմսերից մեկին, վորոնք պահ են տրված, շահում է ընկնում անցյալ վաղ ժամկետ փոխադրված վորևէ տիրաժում, այն դեպքում շահած պարտատոմսը տրվում է տիրոջը շահումն ստանալու



համար, իսկ մնացած պարտատոմսերը փոխանակվում են «Հնգամյակը չորս տարում» փոխառությամբ։

## ԿՈՒՊՈՆԱՅԻՆ ՅԵԿԱՄՏԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

27. Ինդուստրացման 1-ին փոխառության փոխանակության ժամանակ պարտատոմսի տիրոջը վճարվում է փոխանակության մոմենտին № 6 ընթացիկ կուպոնի արժեքը, վորի ժամկետն է 1930 թ. հոկտեմբերի 1-ը, 25 ռուբլիանոց պարտատոմսի համար 75 կոպեկի չափով (15 կոպ. պարտատոմսի 1/5 մասի համար)։ Ինդուստրացման 2-րդ փոխառության ոսկեսերիա—շահող մասի փոխանակության ժամանակ—կուպոն № 2-ով—վորի ժամկետն է 1930 թ. սեպտեմբերի 1-ը, 25 ռուբլիանոց պարտատոմսի համար—1 ռ. 50 կոպ. (պարտատոմսի 1/5 մասի համար 30 կ.) և Գյուղացիական Տնտեսության Ամրացման փոխառության փոխանակության ժամանակ № 3 կուպոնով, վորի ժամկետն է 1931 թվի փետրվարի 1-ը, 10 ռուբլիանոց պարտատոմսի համար 60 կոպեկ (պարտատոմսի 1/4 մասի համար 15 կոպեկ)։

Կուպոնային յեկամուտը հոկտեմբերի 1-ից մինչև 1930 թ. դեկտեմբերի 1-ը Ինդուստրացման 1-ին փոխառության պարտատոմսերով և սեպտեմբերի 1-ից մինչև 1930 թ. դեկտեմբերի 1-ը Ինդուստրացման 2-րդ փոխառության ոսկեսերիա—շահող պարտատոմսերով հաշվարկումների տեխնիկայի պարզեցման համար վճարվում է շահումների ձևով։

Ինդուստրացման 1-ին փոխառության մասնանըչած յերկու ամսվա տոկոսները կազմում են 2 միլիոն ռուբլու գումար (200 միլիոն ռուբլու 1 տոկոս)։ Այս տոկոսների վճարումը պիտի կատարվի շահումների ըն-

լրացուցիչ տիրաժի օգնությամբ, որի մեջ պիտի խա-
ղացվի 100 ռուբլիանոց 20 հազար շահում: Ինդուստ-
րացման 2-րդ փոխառության տոկոսաբեր—շահող մասի
3 ամսվա տալոնները (սեպտեմբեր—նոյեմբեր) կազմում
են 3 միլիոն ռուբլի (200 մլ. ռուբլու 1,5 տոկ.): Այս
գումարը պիտի բաշխվի Ինդուստրացման 2-րդ փոխա-
ռության տոկոսաբեր—շահող մասի պարտատոմսեր
պահողների միջև լրացուցիչ տիրաժի միջոցով, որի
մեջ պիտի խաղացվի 30 հազար շահում 100 ռուբլիա-
նոց: Լրացուցիչ տիրաժներով շահումները վճարման
ենթակա են, սկսած 1930 թ. դեկտեմբերի 1-ից: Այն
պարտատոմսերը, որոնք լրացուցիչ տիրաժներում կը
շահեն, փոխանակության ենթակա չեն: Շահած պար-
տատոմսերը մարվում են: Այդ պարտատոմսերի անվա-
նական արժեքը տերերին վճարվում է շահումի վճար-
ման հետ միաժամանակ:

28. Փոխանակության համար ներկայացվող պար-
տատոմսերն իրենց կից պիտի ունենան այն կուպոննե-
րը, որոնք հետևում են ընթացիկին: Զարարկությու-
ներից խույս տալու համար, շրջանառությունից այն
հանելն անհրաժեշտ է: Փոխանակության ժամանակ պա-
կասող կուպոնների արժեքը պահվում է: Բավարար
հարգելի պատճառների առկայության դեպքում գավ-
ֆինբաժնի վարիչը կարող է թույլատրել կուպոնները
պակասող պարտատոմսերի փոխանակությունն առանց
պահելու նրանց արժեքը: Մատնանշված թույլտվու-
թյունը պետք է ձևակերպվի այն վարկային հիմնար-
կության ուղղված գրությամբ, որը կատարում է
փոխանակությունը:

29. Ինդուստրացման 1-ին փոխառության 7-ից



մինչև 20-րդ և Ինդուստրացման 2-րդ փոխառության
տոկոսաբեր—շահող մասի 3-ից 10-րդ կուպոնները վո-
չնչացվում են և ենթակա չեն վճարման:

30. Այսպիսով, Ինդուստրացման 1-ին և 2-րդ փո-
խառությունների պարտատոմսեր պահողները մինչև
փոխանակությունն ստանում են այն բոլոր եկամուտ-
ները, որ հասնում է նրանց փոխանակվող փոխառու-
թյուններով մինչև 1930 թ. դեկտեմբերի 1-ը, իսկ
Գյուղացիական Տնտեսության Ամրացման փոխառու-
թյան պահողները, մինչև 1931 թ. փետրվարի 1-ը:

«Հնգամյակը չորս տարում» փոխառությունը սկը-
սում է եկամուտ տալ (տոկոսներ և շահումներ) դեկ-
տեմբերի 1-ից:

«Հնգամյակը չորս տարում» փոխառության պար-
տատոմսերի 1930 թ. դեկտեմբերի եկամուտները պի-
տի տրվեն փոխանակվող փոխառությունների պահող-
ներին:

Այդ պատճառով մինչև 1931 թ. հունվարի 1-ը նոր
փոխառության պարտատոմսերը տրվում են իրենց ան-
վանական արժեքով և ոչ տեղեկատու գնով:

Ինչ վերաբերում է Գյուղացիական Տնտեսության
Ամրացման փոխառությանը, այստեղ կուպոն № 3, վո-
րի ժամկետն է 1931 թ. հունվարի 1-ը, գումարը լրի-
վին վճարվում է, չնայած նրան, որ է փոխանակու-
թյուն նրա «Հնգամյակը չորս տարում» փոխառության
պարտատոմսերը տրվում են անվանական արժեքով:
Այս փոխառության նկատմամբ բացառություն արված
է այն պատճառով, որ ընդհանուր կանոնին հետևելու
դեպքում պետք է № 3 կուպոնով ավելի պակաս վճար-
վեր քան վրան նշանակված է: Այս շատ դժվար կլիներ

բացատրելու գյուղացիներին և ամեն կարգի շրջանառվող սխալ մեկնաբանությունները:

## ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ 1931 ԹՎԻ ՀՈՒՆՎԱՐԻ ՄԵԿԻՑ ՀԵՏՈ.

31. Փոխանակվող փոխառությունների վրա 1931 թ. հունվարի 1-ից յեկամուտներ չեն հաշվվում: 1931 թ. հունվարի 1-ից հետո փոխանակության ժամանակ «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերն այլևս անվանական արժեքով չեն տրվում, այլ այն գնով, վոր հավասար է անվանական արժեքին, վրան ավելացրած այն յեկամուտների արժեքը, վորոնք աճել են 1931 թ. հունվարի 1-ից: Այսպիսով այն պարտատոմս պահողից, վորը փոխանակում է իր պարտատոմսերը հունվարի մեկից հետո, գանձվում է այն յեկամուտների արժեքը, վոր աճել է «Հնգամյակը չորս տարում» փոխառությամբ հունվարի 1-ից մինչև փոխանակության օրը:

1931 թ. հունվարի 1-ից հետո «Հնգամյակը չորս տարում» փոխառության վոչ-տոկոսաբեր շահող մասի պարտատոմսերը այն անձին տալու դեպքում, վորը փոխանակում է նոր փոխառությամբ տիրաժներից հետո առաջին օրերը, վոչ միայն պիտի վերադիր մուծում կատարի, այլ ընդհակառակն նրան պիտի վճարվի կանխիկ դրամ դեկտեմբեր ամսվա յեկամուտը: Այս բացատրվում է նրանով, վոր «Հնգամյակը չորս տարում» փոխառության վոչ տոկոսաբեր մասի պարտատոմսերի մեջ տիրաժից հետո չի պարունակում վորևե յեկամուտ, վորովհետև մինչև տիրաժի մոմենտն աճած բոլոր յեկամուտները վճարված են շահումների ձևով և պարտատոմսերը վաճառվում են անվանական արժեքով:



Այդ դեպքում դեկտեմբեր ամսվա յեկամուտը վճարվում է կանխիկ դրամով: Այն գումարները, վորոնք յենթակա յեն պահման կամ վճարման 1931 թ. հունվարի 1-ից հետո փոխանակության ժամանակ, վորոշվում է ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի կողմից յուրաքանչյուր ամսվա համար, և ցուցակը պիտի հաղորդվեն ֆինմարմիններին և վարկային հիմնարկություններին:

## ԿՈՄՊԵՆՍԱՑԻԱ ՅԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԻՋԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ.

32. Ինդուստրացման 1-ին և 2-րդ փոխառությունների պարտատոմսեր պահողները փոխանակելով այդ պարտատոմսերը «Հնգամյակը 4 տարում» փոխառության պարտատոմսերով, ավելի բարձր յեկամտաբերություն ունեցող փոխառությունների փոխարեն ստանում են ավելի պակաս յեկամտաբեր փոխառություն: Այսպես, Ինդուստրացման 1-ին փոխառության յեկամտաբերությունը կազմում է տարեկան մոտ 13 տոկ., Ինդուստրացման 2-րդ փոխառությանը-11 տոկ. տարեկան, «Հնգամյակը չորս տարում» փոխառությանը տարեկան10 տոկ.: Ի վերջո Ինդուստրացման 1-ին փոխառության պահողը տարեկան մոտավորապես կստանար 3 տոկոս պակաս 1931 թ. հունվարի 1-ից մինչև 1937 թ. հոկտեմբերի 1-ը (Ինդուստրացման 1-ին փոխ. մարման վերջնական ժամկետը): Ինդուստրացման 2-րդ փոխառության պահողը տարեկան պակաս կստանար մոտ 1 տոկոս 1931 թ. հունվարի մեկից մինչև 1938 թ. սեպտեմբերի մեկը (Ինդուստրացման 2-րդ փոխառության մարման վերջնական ժամկետը):

**Ինդուստրացման** 1-ին և 2-րդ փոխառությունների յեկամտաբերության տարբերությունը պարտատոմս պահողներին հատուցվում է հետևյալ ձևով։

«Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերը, վոր նախանշանակված են փոխանակության համար, իրենց կից ունեն յերկու վերադիր տալոն։ Ինդուստրացման 1-ին փոխ. պարտատոմս պահողների փոխառության պարտատոմսերը տրվում են № 1 տալոնի հետ միասին, Ինդուստրաց 2-րդ փոխառութ. պահողներին № 2 տալոնի հետ միասին։ Գյուղացիական Տնտեսության Ամրացման փոխառության պարտատոմսերը փոխանակելու համար «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերը տրվում են առանց վերադիր տալոնների։ Վոչ հարկավոր տալոնները կտրվում և հանձնվում են Պետբանկի հիմնարկություններին։

«Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսին կից № 1 վերադիր տալոնը իրավունք է տալիս ստանալու 1937 հոկտեմբերի մեկից 7 ռ. 80 կոպ. 50 ռուբլիանոց պարտատոմսի համար (3 ռ. 90 կ. պարտատոմսի $^{1}/_{2}$-ի համար, պարտատոմսի $^{1}/_{10}$-ի համար 78 կոպեկ, պարտատոմսի $^{1}/_{20}$-ի համար 39 կոպեկ)։ № 2 վերադիր տալոնն իրավունք է տալիս 1938 թ. սեպտեմբերի մեկից ստանալու 50 ռուբլիանոց պարտատոմսի համար 5 ռուբլի (պարտատոմսի $^{1}/_{2}$-ի համար 2 ռ. 50 կ., պարտատոմսի $^{1}/_{10}$-ի համար—50 կոպ., պարտատոմսի $^{1}/_{20}$ մասի—25 կ.)։

Գյուղ. Տնտ. Ամրացման փոխառութ. պարտատոմ-



սի յեկամտաբերությունը (տարեկան 13 տոկոս) «Հնգամյակը չորս տարում» փոխառության յեկամտաբերությունից (10 տոկ.) բարձր է։ Սակայն մասնանշած փոխառությունը պահողները փոխանակության ժամանակ վոչ մի հատուցում չեն ստանում, փոխարենը վոչ մի կորուստ չեն կրում։ Գյուղ. Տնտ. Ամրաց. փոխառութ. լրիվին մարվում է 1931 թ. փետրվարի մեկին, մինչև այդ ժամկետն էլ պարտատոմս պահողներին փոխանակության ժամանակ վճարված են փոխառության բոլոր յեկամուտները։ Յեթե այն պարտատոմսերը, վորոնք վերադիր տալոններ ունեն, շահումների կամ մարումների տիրաժ են դուրս գալիս այդ տալոնների վճարման ժամկետից վաղ, այն դեպքում պարտատոմս պահողին վերադիր տալոնը վճարվում է այն գումարով, վորը հատուցանե յեկամուտների տարբերությունը 1931 թ. հունվարի մեկից մինչև պարտատոմսերի շահումների կամ մարման տիրաժ դուրս գալու ժամկետը։ Այն գումարները, վորոնք վճարման յենթակա յեն այս դեպքերում վերադիր վճարներով, առանձին պիտի հրապարակվեն շահումների կամ մարման յուրաքանչյուր տիրաժին կից։

Պարտատոմսը մինչև տալոնի վճարման ժամկետը վաճառելը, տալոնը վճարման յենթակա չէ և կորցնում է իր ուժը։

Վերադիր տալոնները վճարվում են միայն այն դեպքում, յեթե նրանք պարտատոմսերից զատված չեն, թեկուզ կպցված լինեն, վճարման յենթակա չեն և վոչնչացվում են։

## ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

33. Փոխանակվող փոխառությունների պարտատոմսերի համար տրված փոխատվություններով, վորոնք չեն մարված մինչև 1930 թ. հունիսի 10-ը, հաշվարկումը կատարվում է հետևյալ ձևով:

Փոխատվության ստացողին են պատկանում բոլոր եկամուտները (տոկոսները և շահումները մինչև 1930թ. դեկտեմբերի 1-ը: Այդ պատճառով նրանից տոկոսներ են պահվում փոխատվության համար մինչև 1930 թ. դեկտեմբերի 1-ը:

Մասնանշած կարգն առաջ է գալիս նրանից, վոր այն պարտատոմսերը, վորոնք գտնվում են գրավադրության մեջ փոխատվությունների համար և այդ փոխատվությունները լիկվիդացիայի չեն յենթարկված մինչև 1930 թ. հունիսի 10-ը, պետք մասնակցեն ավելի վաղ ժամկետ փոխադրված շահումների տիրաժներին: Այսպիսով, պարտատոմս պահողը փոխանակվող փոխառություններից կստանա իրեն հասանելիք ամբողջ եկամուտը շահումների ձևով: Վորպեսզի այսպիսով չբարձրացնել գրավ դրված պարտատոմսերի եկամտաբերությունը, փոխատվության ստացողից գանձվում են տոկոսներ փոխատվության համար մինչև 1930 թ. դեկտեմբերի 1-ը:

Հաշվարկումների այս կարգը չի փոփոխվում ամբողջ ժամանակվա ընթացքում 1930 թ. հունիսի 10-ից սկսած և մինչև 1931 թ. դեկտեմբերի 1-ը անկախ նրանից, թե յերբ կներկայանա փոխատվության պահողը (ссудо-держатель) փոխատվությունը լիկվիդացիայի յենթարկելու համար:



Այսպես օրինակ փոխատվություն է տրված 1-ին նոյեմբերի 1929 թ. ինդուստրացման 2-րդ փոխ. տոկոսաբեր չահող մասի պարտատոմսերով 60 ռուբ. չափով, ապահովված 4 հատ 25 ռուբ. պարտատոմսով, վորի գումարն է 100 ռ.: Փոխատվության ստացողը ներկայացել է փոխատվությունը լիկվիդացիայի յենթարկելու 1930 թ. սեպտեմբերի 1-ին: 13 ամսվա համար (1929 թ. նոյեմբերի 1-ից և մինչև 1930 թ. դեկտեմբերի 1-ը) փոխատվության ստացողից հանում է տոկոսներ փոխատվության համար 7 ռ. 80 կ., իր հերթին յուրաքանչյուր կուպոնով, վորի ժամկետն է 1930 թ. սեպտեմբերի 1-ը, նրան հանում է 1 ռ. 50 կ. իսկ ընդամենը չորս կուպոնով՝ 6 ռուբլի: Այսպիսով փոխատվության ստացողը տոկոսների համար պետք վճարի 1 ռ. 80 կ., իսկ փոխատվության պարտքի հետ միասին 61 ռուբլի 80 կոպեկ: Այդ պարտքը մարվում է վարկային ընկերության պարտֆելին փոխանցելով 62 ռ. 50 կոպեկի պարտատոմս: Փոխատվության ստացողին տրվում է «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսեր № 2 վերադիր տարոնի հետ միասին 37 ռ. 50 կոպ. գումարի և կանխիկ դրամով 70 կոպեկ (մարման կարգի մասին տես կ. կ. 34—36):

34. Փոխատվությունների մարումը կատարվում է հետևյալ ձևով.

ա) գրավ դրված պարտատոմսերի տերերը կարող են այն փրկագրել, մարելով փոխատվությունները և նրանց տոկոսները կանխիկ դրամով:

բ) Այն փոխատվությունները, վորոնք չեն մարվել փոխատվության ստացողների կողմից, մարվում են վարկային ընկերության կողմից, վորը փոխատվության

և տվել, ի վճարումն փոխառության պարտքի գրավ դրված պարտատոմսերի թվից համապատասխան մասն ընդունելու միջոցով: Փոխառության մարման համար պարտատոմսերի հաշվարկությունը կատարվում է անվանական արժեքով:

35. Փոխառության համար պահանջվող տոկոսները, առաջին հերթին մարվում են ի հաշիվ փոխառության ստացողին հասանելիք յեկամուտների (տոկոսների և շահումների):

Փոխառության տոկոսների մարումը յեկամուտներից կատարվում է հետևյալ ձևով՝

Կուպոնի յեկամուտը հաշվվում է ի վճարումն փոխառության տված տոկոսների: Կուպոնային յեկամտի ավելցուկի առկայության դեպքում վերջինս վճարվում է փոխառության ստացողին առձեռն դրամով:

Շահումի գումարից պահվում են փոխառության տոկոսները, նմանապես և փոխառության պարտքի այն մասը, վորն ընկնում է շահած պարտատոմսի վրա:

Յեթե գրավ դրված պարտատոմսերի յեկամուտները չեն ծածկում փոխառության ստացողի փոխառության տոկոսների պարտքը, այն դեպքում պահանջվող տոկոսների մնացած մասը փոխառության ստացողը կարող է մարել առձեռն դրամով: Առձեռն դրամով չմարված տոկոսները մարվում են վարկային հիմնարկության կողմից գրավ դրված պարտատոմսերի համապատասխան մասն անվանական արժեքով իր պարտֆելյին փոխանցելու միջոցով:

Ծանոթություն.— Փոխառությունների հաշվարկության դեպքում վարկային հիմնարկու-



թյունները պետք է օգտագործեն փոխանակության համար ստացված 2 ռ. 50 կոպեկանոց պարտատոմսեր:

36. Յեթե փոխառության պարտքի և տոկոսների ծածկման դեպքում ավելցուկ է գոյանում, այն դեպքում վերջինս տրվում է փոխառության ստացողին կանխիկ դրամով:

Այսպես, 30 ռուբլի փոխառության պարտքի և փոխառության տոկոսների համար 3 ռ. 60 կոպ. պարտքի դեպքում, ընդամենը 33 ռ. 60 կոպ. մարելու համար վաճառվում է 35 ռուբլու պարտատոմս, ընդ վորում ավելցուկը 1 ռ. 40 կոպ. վերադարձվում է փոխառության ստացողին կանխիկ դրամով:

37. Փոխառությունը լիկվիդացիայի յենթարկելու համար փոխառության ստացողը մինչև 1930 թ. նոյեմբերի 1-ը չներկայանալու դեպքում, վարկային հիմնարկությունն այդ լիկվիդացիան ինքնուրույն է կատարում նոյեմբերի ընթացքում ընդ վորում գրավ դրված պարտատոմսերը փոխանակում է «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերով հետևյալ ձևով.

Ինդ. 1-ին փոխ., Գյուղ. Տնտ. Ամրացման փոխ. և Ինդ. 2-րդ փոխ. տոկոսաբեր շահող մասի պարտատոմսերը փոխանակվում են նոր փոխառության տոկոսաբեր շահող մասի պարտատոմսերով:

Ինդ. 2-րդ փոխ. վոչ տոկոսաբեր—շահող մասի պարտատոմսերը փոխանակվում են «Հնգամյակը չորս տարում» փոխառության վոչ տոկոսաբեր շահող մասով:

Այն ավելցուկը, վորը ստացված է փոխառության պարտքը և տոկոսները ծածկելու դեպքում, համապա-

տասխան կտրոնների բացակայության պատճառով, կանխիկ դրամով տրվում է փոխառության ստացողին անձամբ ներկայանալու դեպքում:

38. Եթե գրավ դրված պարտատոմսերից մեկը շահել է ավելի մոտ ժամկետ փոխադրված տիրաժներից վորևե մեկում կամ թե լրացուցիչ տիրաժներով, այն դեպքում փոխառության լիկվիդացիան կատարվում է հետևյալ ձևով՝

ա) պարտատոմս պահողը կարող է մարել փոխառության պարտքի տոկոսները և փոխառության պարտքի այն մասը, վորն ընկնում է շահող պարտատոմսերին: Այս դեպքում շահող պարտատոմսը տրվում է նրան, իսկ մնացած պարտատոմսերը փոխանակվում են գրավ դրված պարտատոմսերի համար սահմանված կարգով:

բ) Պարտատոմս պահողը, յեթե մերժում է մուծել տոկոսների և փոխառության պարտքի այն մասը, վորն ընկնում է շահած պարտատոմսի վրա, այն դեպքում փոխառության փոխանակությունը և լիկվիդացիան կատարվում է վոչ վաղ այն ժամկետից, յերբ կարող է վճարվել:

39. Եթե փոխանակվող փոխառությունների պարտատոմսերը ծանրաբեռնված են փոխառությամբ, վոր տրվել է աշխկց. հանձնաժողովի թույլտվությամբ, այն դեպքում այդ պարտատոմսերը լրիվին փոխանակվում են «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերով: Փոխառության պարտքը փոխադրվում է նոր փոխառության պարտատոմսերի վրա և մարվում են աշխկցող հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում: Փոխառության տոկոսների հաշվարկումը կատարվում է սովորական կարգով, փո-



խառության մարելու կամ լիկվիդացիան վճարելու դեպքում:

## ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕՊԵՐԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ.

40. Ամիսը յերկու անգամ 17-ին (1-ից մինչև 15 ներառյալ) և 2-ին (16-ից մինչև 30—31 ներառյալ) վարկային հիմնարկությունները, շրջգործկոմների հաշվարկային կենտրոնները և կապի գավառային այն գրասենյակները, վորոնք մասնակցում են փոխանակության օպերացիայի անցկացմանը, կատարում են հաշվարկում Պետբանկի հիմնարկության հետ, ներկայացնելով հաշվետու տեղեկանքը սրան կցված ձևով:

1930 թ. դեկտեմբերի 31-ից հետո փոխանակված պարտատոմսերի հաշվարկումները և հանձնումը կատարվում են ամսական մեկ անգամ—2-ին նախորդ ամսվա համար:

Պարտատոմսերը հանձնվում են Պետբանկի հիմնարկության չմարված գրությամբ և առանց համարների ցուցակագրության: Հանձնվող պարտատոմսերը պետք է տեսակավորված լինեն ըստ փոխառությունների տեսակների և նրանց կուպյուրային արժեքի:

Փոխանակված պարտատոմսերի հետ միասին պետք և հանձնվեն «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերից կտրված վերադիր տալոնները: Յուրաքանչյուր 100 ռ. անվանական արժեքի փոխանակված պարտատոմսի համար պետք է հանձնվեն «Հնգամյակը չորս տարում» փոխառության վերա-

գիր տալոնները՝ Խնդ. 1-ին փոխառության պարտատոմսերի հետ միասին № 2 10 ռուբլու տալոններ. Խնդ. 2-րդ փոխ. պարտատոմսերի հետ միասին № 2 15 ռուբ. 60 կոպ. տալոններ. Գյուղ. Տնտ. Ամրացման փոխառության պարտատոմսերի հետ միասին №№ 1-2 25 ռուբ. 60 կոպ. տալոններ:

Ստուգման հարմարության համար վերոհիշյալ տալոնները, իրենց արժեքներին համապատասխան պետք ե կարված լինեն առանձին փաթեթներով:

ա) Տալոն № 1, բ) տալոն № 2, և գ) տալոն №№ 1-2: Փաթեթները կապում են բանդերոլով և յուրաքանչյուրի վրա մակագրվում ե համապատասխան տալոնների անվանական արժեքը:

Ուրիշ քաղաքների վարկային հիմնարկությունները փոխանակված պարտատոմսերը, վերոհիշյալ տալոնները և հաշվետու տեղեկագրերն ուղարկում են Պետբանկի հիմնարկության հաշվին: Պետբանկի հիմնարկություններն այդ ծախքերն անցկացնում են, «ԽՍՀՄ. ՑԺԿ. պետ փոխառությունների իրացման № 109 հաշվի դեբետին»:

## ՊԵՏԲԱՆԿԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

41. Պարտատոմս պահողներից և վարկային հիմնարկություններից անմիջականորեն ստացվող Խնդ. 1-ին և 2-րդ փոխառությունների և Գյուղ. Տնտ. Ամրացման փոխառության պարտատոմսերը, նմանապես և այն վերոհիշյալ տալոնները, վորոնք կտրվել են «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերից: Պետբանկի հիմնարկությունները ստացած օրը մտցնում են և անցկացնում են «փոխանցիկ արժեքների»



արտասյունակային (заграфный) հաշվին: Պարտատոմսերի և տալոնների հաշվառությունը, վոր անցկացվում ե «փոխանցիկ արժեքների (переходящие ценности) հաշվին, տարվում ե փոխառության յուրաքանչյուր տեսակի համար: Այս պարտատոմսերը և տալոնները չեն ոչնչացվում մինչև ԽՍՀՄ-ի ՑԺԿ-ից այդ մասին հատուկ ցուցմունք ստանալը:

Վարկային հիմնարկություններից ստացվող այն գումարները, վորոնք գանձված են պակաս կուպոնների համար, Պետբանկի հիմնարկություններն անցկացնում են «ԽՍՀՄ. ՑԺԿ-ի պետփոխառությունների իրացման» հաշվի կրեդիտին, սակայն այս գումարներն առանձին են հաշվառում պետփոխառությունների այլ մուտքերից: Այս նույն հաշվով էլ 1931 թ. հունվարի 1 ից անցկացվում են այն գումարները, վորոնք ստացվել են փոխանակության ժամանակ վորպես գնի տարբերություն «Հնգամյակը չորս տարում» փոխառության և փոխանակվող պարտատոմսերի անվանական արժեքի միջև:

Փոխանակության ոպերացիայի համար ստացվող «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերը, վերոհիշյալ տալոնների հետ միասին, Պետբանկի հիմնարկություններն անցկացնում են № 174 արտասյունակային (заграфный) հաշվին «ԽՍՀՄ ՑԺԿ-ի պետ փոխառությունների իրացման վերաբերյալ», սակայն «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերից առանձին են հաշվառվում, վորոնք վերոհիշյալ տալոններ չունեն:

Վարկային հիմնարկություններին փոխանակության համար տրվող պարտատոմսերը Պետբանկի հիմ-

նարկությունները հաշվառում են № 187 հաշվով «մուրհակներ, փոխառթղթեր, արժեքներ հաշվեկշռային և արտահաշվեկշռային այլ հաշիվների վերաբերյալ», առանց այդ պարտատոմսերը դուրս գրելու № 174 հաշվից:

Ամեն անգամ, վարկային հիմնարկություններից և կապի գրասենյակներից հաշվետու տեղեկագիրը ստանալուց հետո, «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերը, որ տրվել են փոխանակության համար, Պետբանկի հիմնարկությունները չեք են դուրս գրում № 187 հաշվով և միաժամանակ № 174 հաշվով:

Փոխանակական օպերացիան ամբողջապես ինչպես յերկրով (փոխանակված պարտատոմսերի մասով), նույնպես և մասերով («Հնգամյակը չորս տարում» փոխառության փոխանակությամբ-խաղացած պարտատոմսերի վճարում), անցկացվում է կենտրոնում պետբյուջետային բաժնում Պետբանկի հիմնարկությունների փոխանակության վերաբերյալ ներկայացրած հաշվետվության հիման վրա:

Պարտատոմսերի փոխանակության համար վճարվող մասհանումը (ներկա հրահանգի 7 կետ) Պետբանկի հիմնարկությունները պետք է անցկացնեն № 109 հաշվի դեբետով «ԽՍՀՄ ՖԺԿ. փոխառությունների իրացման վերաբերյալ» և հաշվառեն առանձին այն մասհանումներից, որ վճարվում է փոխառության իրացման համար:

Պետբանկի գավառային հիմնարկությունները ս/թ օգոստոսի 4-ից սկսած 15 օրը մի անգամ ամսի 19-ին և 4-ին Պետբանկի վարչության ֆոնդային բաժնին (պատճենները տեղական ֆինմարմնին և Պետբանկի յերկրային կամ մարզային գրասենյակին) տեղեկություններ են հաղորդում փոխանակության օպերացիայի ընթացքի մասին նույն ձևով, որ սահմանված է վարկային ընկերությունների համար:

1930 թ. դեկտեմբերի 31-ից հետո Պետբանկի գավառային հիմնարկությունները հաշվետու տեղեկությունները պիտի ներկայացնեն յեռամսյակներով— հաշվետու յեռամսյակին հաջորդող ամսի 10-ին:

ԽՍՀՄ. ՖԺԿ. Պետվարկի վարչության Պետի
Տեղակալ՝ ԼՈՑԵՎԵՑԿԻՅ

Ավագ Հաշվապահ՝ ՄԱՐՏԻՆ

Խորհրդատու՝ ԳՈԽՄԱՆ

Պետաշխնայդրամարկղների հաշվառության և հաշվետվության կարգը տրված է առանձին հավելվածով:

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐ... Гос. Публ. библиотека ՀՍԽՀ — ССРА им. А. Мясникяна Ա. Մյասնիկյանի անվ.

(Մատնանշել, թե ում է ներկայացվում տեղեկագիրը)

ՀԱՇՎԵՏՈՒ ՏԵՂԵԿԱԳԻՐ № ........

Փոխառությունների փոխանակվող պարտատոմսերի համար «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերը տրվելու մասին։
.................................մինչև..........................ամսը 193 թ. ..................

(Մատնանշել, թե ով է ներկայացնում տեղեկագիրը)

Տարժում «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերի

| ՎԵՐ ՄԱՍԻ | Ստացված են պարտատոմսեր փոխանակման համար ընդհանուր անվանական գումարով | Տրված են պարտատոմսեր անվանական գումարով: Հաշվետու շրջանի համար | Տրված են պարտատոմսեր անվանական գումարով: Փոխանակության սկզբից | Մնում են պարտատոմսեր գումարով | Պարտատոմսերի փոխանակության ժամանակ գանձված է գնի տարբերություն. Ռուբ. | Կոպ. |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | |
| Տոկոս շահող | — | — | — | — | — | — |
| Վոչ % շահող | — | — | — | — | — | — |
| ԸՆԴԱՄԵՆԸ | — | — | — | — | — | — |



2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տեղեկագրի հակառակ կողմը).

«Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերով փոխանակված պարտատոմսերի մասին.

| | Անվանական գումարը: Ինդ. 1-ին փոխ. | Անվանական գումարը: Ինդ. 2-րդ փոխ. | Անվանական գումարը: Գ. Տ. ամր. փոխ. | Անվանական գումարը: ԸՆԴԱՄԵՆԸ | Փոխանակման ենթակա չեն պարտատոմսերի գումարը | 4 սյունակում մատնանշված փոխանակության գումարը բաշխել հետևյալ ձևով. Քաղաք: Բանվ. և ծառայող. կողմից. | Քաղաք: Մնացած բնակչ. | Գյուղ: Կոոպերացիա (սպառող. կոոպ. և այլ կազմակերպություններ) | Գյուղ: Բանվոր և ծառայող- ների կողմից | Գյուղ: Մնացած բնակչություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| Հաշվետու շրջանում . | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Փոխանակ. սկզբից . | — | — | — | — | — | — | — | — | — | — |

Տեղեկագրին կից ներկայացվում են

| | Գումարը |
|---|---|
| | Ռուբ. կոպ. |
| 1. Փոխանակված պարտատոմսեր . . | — — |
| 2. Վճարված կտրոնները*) | |
| Ինդուստրացման 1-ին փոխառ. ո. . . կ. | |
| Ինդուստրացման 2-րդ փոխառ. ո. . . կ. | |
| Գյուղացիական տնտեսության ամրացման փոխառության . . ո. . . կ. | |
| 3 վերադիր տալոններ № 1 ո. . . կ. | |
| Վերադիր տալոններ № 2 | |
| Վերադիր տալոններ № № 1—2 | |
| 4. Պակասող կտրոնների համար գանձված գումարներ. | |
| Գնի տարբերություն, գանձված պարտատոմսերի փոխանակության ժամանակ: | |
| Ընդամենը՝ | |

« ......... » ........................ ամսի 1920 թ. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվե ............................................................

*) Հատվածի 5-րդ սյունակը լրացնում են վարկային հիմնարկությունները այն տեղեկագրում, որոնք ներկայացվում են 1—1—31 թ. հետո: Պետբանկի հիմնարկությունների կողմից վարչության ֆոնդային բաժանմունքին ուղարկվող հաշվետու տեղեկագրերում 5-րդ սյունակը (1 և 2 հատ.) չի լրացվում:



Հայպոլիգրաֆի տպարան

Պատվեր 3963 Գրատեպգլ. 5728 (բ) Տիրաժ 3000

570
ՀՀ Ազգային գրադարան
NL0207088

27962